ԹԻՒՐԻՄԱՑՈՒԹԵԱՆՑ ԴԷՄ

ՄԻԶԱՆՑՔԻ ԱՄԷՆ ԲՈՐԲՈՔՈՒՄ ԵՒ ԹԱՐԱԽՈՏՈՒՄ ՋԵՐՄԱՄԻԶՈՒԹԻՒՆ ՉԷ

Կ'արժէ անդամ մը եւս կրկնել որ Ջերմամիզութիւնը (chaude-pisse, blennhorragie, պէլ-սօլուքլուղը) միզանցքի բորբոքում և թարախհոսում է, որուն միակ ու եզական պատճառը կոնոքոքն է։

Կան ուրիշ պատճառներ և մանրէներ, թէև հազուադէպ, որոնք միզանցքի թարախհոսում կամ բորբոքում կ'առաջացնեն, բայց որ երբեք ջերմամիզութիւն չէ։

Թուենք։

1. — Երբեմն կարծր կեղը, «չանքը», միզանցքին մէջ կ'ելլէ և թարախ կ'արտաղեղէ միզանցքին բացուածքէն։ Մեծ սխալ է կարծել, որ կարծր կեղը հրեւան կուգայ լոկ տեսանելի մակերեսին վրայ։ Այդպիսի օրէնք չկայ։

2. — Կան մարդիկ, որ թլիփի բերնէն արձակուած թարախը ջերմամիզութիւն կարծեր են։ Ցաճախ այդ թարախը կուգայ թլիփին ներքին երեսի բորբոքումէն, որ աղտոտութեան հետեւանք է։ Անհրաժեշտ է, առնուազն երեք օրը մէկ անգամ, թլիփը կամ թլփատը ետ քաշել և դաղջ ջուրով լուալ։

3. — Ուրիշ մանրէներ եւս միզանցքի բորբոքում կը պատճառեն. Ա. — Կեղծմաշկի մանրէին նմանող մանրէներ։ Բ.— Հիւծախտի (թիւպէրքիւլոզ)։ Գ.— Ադիքներու մէջ բնակող տեսակ մը մանրէ, որ թէ սրբանէն և թէ արիւնէն միզանցքին մէջ կը մտնէ։ Դ. — Դաշտանի ժամանակ սեռային մերձեցումը։ Եթէ կինը վարակիչ ըսպիտակահոսութիւն ունի, ամէնէն նպաստաւոր շրջանն է հասարակ վէրքի մանրէներով վարակուելու։ Ե. — Պաղառութեան պարագային, մարմնի ծննդական մասին դիմադրականութիւնը այնքան կը նուազի, որ թոյլ կուտայ մանրէներուն նպաստաւոր պատեհութենէն օգտուիլ և բորբոքել միզանցքը։ Այդպիսի վարակումի համար պէտք է հակում, ներքին տրամադրութիւն ունենալ։ Այդ է պատճառը, որ յոդացաւ և յոդակաթ (goutte) ունեցողները աւելի յաճախ ենթակայ են միզանցքի բորբոքումի։

4. — Սեռային չափազանց ու յաճախադէպ մերձեցում, մանաւանդ տարիքաւոր մարդկանց մէջ, որոնք պէտք է զգուշանան շրջայտ մեղրալուսինէն։

5. — Կանանչեղէններէն ոմանք միզանցքի բորբոքումի բոլոր նշանները կը յայտնաբերեն։ Կը ճանչնամ մէկը, որ սաստիկ բորբո-

քում կ'ունենայ ամէն անգամ որ կուշտուկուռ ելակ կ'ուտէ: Կոտնմն ու ծնեբեկն (asperge) ալ այս դասին կը պատկանին։

6. — *Ինքնաբեր սերմնահոսութիւնը կը շփոթեն թարախի հետ։ Նաև սեռային գրգռումի պատճառով, հեղուկ մը դուրս կ'հլլէ միզանցքին բացուածքէն, որ միզանցքի բորբոքումի կամ ջերմամիզութեան հետ ոչ մէկ առնչութիւն ունի։*

7. — *Երախաները յաճախ կը խաղան իրենց սեռային գործարաններուն հետ և քարի կտոր, կուտ, եւայլն կը հրեն միզանցքէն ներս, որ կը բորբոքի և թարախ կ'արտադրէ։*

8. — *Միզափամփուշտին ու միզանցքին մէջ գոյացած քարերն ու աւազները։*

9. — *Մէզին չափէն աւելի թթուութիւնը։*

10. — *Որոշ դեղօրայք, ինչպէս կոլը (cantharide)։*

Ամփոփում եւ եզրակացութիւն. — *Բուն ջերմամիզութիւնը կոնոքոք կոչուած միքրոպին ազդեցութեան տակ յառաջացած միզանցքի բորբոքում և թարախհոսում է. բայց ամէն թարախհոսում կամ միզանցքի բորբոքում ջերմամիզութիւն չէ, թէև այդպիսի պարագաներ, բաղդատաբար կոնոքոքի ազդեցութեամբ յառաջացած բորբոքումները, շատ հազուադէպ են։* *Բժ. ԵՐ. ԽԱԹԱՆԱՍԵԱՆ*

ՀԱՆՐԱՏՈՒՆՆԵՐԸ ՓԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ֆրանսայի մէջ կը տեսնուի զօրեղ հոսանք մը հանրատուններու փակումին պաշտպան: Եւրոպայի մէջ տակաւին երեք երկիրներ, Ֆրանսա, Սպանիա եւ Ցունաստան, պաշտօնապէս արտօնած են բոզանոցներու բացումը։ Սակայն Ֆրանսական քանի մը քաղաքներ (Պէգիէ, Ֆոլմար, Փօ, Ռուպէ) փակած են իրենց հանրատունները: Վերջին որոշումը տուած էր երեք տարի առաջ Սթրազպուրկ, որ 170.000 բնակչութիւն եւ 7.000 զինուոր ունի: Ստորին Հռենոսի Առողջապահութեան Նահանգային Խորհուրդը այս առթիւ կը հրատարակէ հետեւեալ զեկոյցը.

«Առողջապահական Խորհուրդը, 5 փետր. 1929ի նիստին մէջ, վերահասու եղաւ այն տեղեկագրին, որ կը վերաբերի Սթրազպուրկի մէջ վեներական հիւանդութեանց զարգացման։ եւ տեսաւ որ, 1 փետր. 1926էն ի վեր, երբ փակուեցան հանրատունները, քաղաքին մէջ վեներական հիւանդութիւնները նուազած են կարեւոր համեմատութեամբ մը: Մինչ, ըստ քաղաքային հիւանդանոցին բժշկական քննութիւններուն, նախապէս ամիսը միջին հաշուով սիֆիլիմէ վարակուած 16 հոգի կը ներկայանային, 1928ին այդ թիւը իջած է մինչեւ 8ի: Սթրազպուրկի զօրանոցին մէջ նախապէս ամիսը 14 հոգի սիֆիլիսով կը վարակուէին, մինչդեռ 1928ին՝ 1էն ալ պակաս։ Առողջապահական Խորհուրդը, չափազանց գնահատելով այս արդիւնքը, որոշեց խնդրել մամուլէն, որպէսզի ժողովուրդին տեղեկացնէ եւ *սրբագրուի այն սխալ եւ վտանգաւոր կարծիքը թէ հանրատունները առողջապահական տեսակէտով կարեւոր ապահովութիւն մը կը ներկայացնեն*»։